St Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered charity No. 1173403
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk **https://www.facebook.com/StYeghiche**

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵԶՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILLINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 23rd August 2026 Bulletin 38/2026

First Sunday after the Assumption of the Holy Mother of God

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ6:16-7:1

Paul Writes to Corinthians

եւ ի՞նչ համաձայնութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռքերուն հետ, որովհետեւ դուք ապրող Աստուծոյ տաճարն էք՝ ինչպէս Աստուած ըսաւ. «Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց մէջ պիտի շրջիմ. անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան:

Ուստի ելէ՛ք անոնց մէջէն եւ զատուեցէ՛ք,- կ'ըսէ Տէրը:- Անմաքուր բանի մի՛ դպչիք,
ու ես պիտի ընդունիմ ձեզ. ես Հայր պիտի ըլլամ ձեզի, ու դուք՝ իմ որդիներս եւ աղջիկներս պիտի ըլլաք,- կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

Ուրեմն, սիրելինե՛ր, այս խոստումները ունենալով՝ մաքրե՛նք մենք մեզ մարմինի ու հոգիի ամէն տեսակ պղծութենէ, եւ կատարելագործե՛նք սրբացումը Աստուծոյ վախով:

The Epistle of St Paul to the 2 Corinthians 6:16-7:1

What agreement is there between the temple of God and idols? For we are the temple of the living God. As God has said: "I will live with them and walk among them, and I will be their God, and they will be my people." [c]

Therefore, "Come out from them and be separate, *says the Lord.* Touch no unclean thing, and I will receive you." [d] And, "I will be a Father to you, and you will be my sons and daughters,

Therefore, since we have these promises, dear friends, let us purify ourselves from everything that contaminates body and spirit, perfecting holiness out of reverence for God.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 1:39-56

Այդ օրերը Մարիամ կանգնեցաւ, փութալով գնաց լեռնակողմը՝ Յուդայի մէկ քաղաքը, մտաւ Զաքարիայի տունը եւ բարեւեց Եղիսաբէթը: Երբ Եղիսաբէթ լսեց Մարիամի բարեւը, երախան խայտաց անոր որովայնին մէջ. իսկ Եղիսաբէթ լեցուեցաւ Սուրբ Հոգիով, ու բարձրաձայն գոչելով ըսաւ. «Դուն օրհնեա՛լ ես կիներուն մէջ, եւ օրհնեա՛լ է որովայնիդ պտուղը: Այս ի՞նչպէս եղաւ, որ իմ Տէրոջս մայրը եկաւ ինծի. որովհետեւ ահա՛ երբ քու բարեւիդ ձայնը հասաւ ականջիս, երախան ցնծութենէն խայտաց որովայնիս մէջ: Երանի՛ անոր՝ որ հաւատացած է, որովհետեւ՝ պիտի կատարուին այն բաները՝ որոնք Տէրոջմէն ըսուեցան իրեն»:

Մարիամ ըսաւ. «Իմ անձս կը մեծարէ Տէրը, եւ իմ հոգիս ցնծաց իմ Փրկիչ Աստուծմովս, քանի որ նայեցաւ իր աղախինին նուաստութեան. արդարեւ ահա՛ ասկէ ետք՝ բոլոր սերունդները երանելի պիտի կոչեն զիս, որովհետեւ Հզօրը մեծամեծ բաներ ըրաւ ինծի: Անոր անունը սուրբ է, եւ անոր ողորմութիւնը իրմէ վախցողներուն վրայ է՝ սերունդէ սերունդ:

Իր բազուկով զօրութիւն ցոյց տուաւ, ցրուեց ամբարտաւանները իրենց սիրտին երեւակայութեամբ:

Զօրաւորները իջեցուց իրենց գահերէն, ու բարձրացուց նուաստները:

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where

2: A short interpretation of the Scripture reading

Luke writing

Անօթիները լիացուց բարիքներով, եւ պարապ ճամբեց հարուստները:

Օգնութեան հասաւ իր Իսրայէլ ծառային, յիշելով իր ողորմութիւնը ինչպէս ինք խոստացած էր մեր հայրերուն - Աբրահամի եւ անոր զարմին հանդէպ՝ յաւիտեան»:

Մարիամ անոր քով մնաց՝ գրեթէ երեք ամիս, ապա վերադարձաւ իր տունը:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 1:39-56

Mary Visits Elizabeth

At that time Mary got ready and hurried to a town in the hill country of Judea, where she entered Zechariah's home and greeted Elizabeth. When Elizabeth heard Mary's greeting, the baby leaped in her womb, and Elizabeth was filled with the Holy Spirit. In a loud voice she exclaimed: "Blessed are you among women, and blessed is the child you will bear! But why am I so favoured, that the mother of my Lord should come to me? As soon as the sound of your greeting reached my ears, the baby in my womb leaped for joy. Blessed is she who has believed that the Lord would fulfil his promises to her!"

Mary's Song

Mary Visits Elizabeth

And Mary said: "My soul glorifies the Lord and my spirit rejoices in God my Saviour, for he has been mindful of the humble state of his servant.

From now on all generations will call me blessed, for the Mighty One has done great things for me—holy is his name.

His mercy extends to those who fear him, from generation to generation.

He has performed mighty deeds with his arm; he has scattered those who are proud in their inmost thoughts.

He has brought down rulers from their thrones but has lifted up the humble.

He has filled the hungry with good things but has sent the rich away empty.

He has helped his servant Israel, remembering to be merciful to Abraham and his descendants forever, just as he promised our ancestors."

Mary stayed with Elizabeth for about three months and then returned home.

Ս. Հովակիմի և Աննայի՝ Ս. Աստվածածնի ծնողների և Յուղաբեր կանանց հիշատակության օր 25-8-2026

Սուրբ Հովակիմի և Աննայի անուններն անմիջապես կապվում են Հիսուսի հետ՝ լինելով Աստվածամոր ծնողները: Ըստ ավանդության՝ բարեպաշտ և մեծահարուստ Հովակիմը Դավթի ցեղից էր՝ թագավորական տնից, իսկ Աննան՝ քահանայական տնից: Մի օր, տաճարում ընծա մատուցելիս, քահանան Հովակիմին պատվիրում է վերջում կանգնել, քանի որ նա անզավակ էր: Սրանից վշտացած՝ Հովակիմը դուրս է գալիս և անմիջապես լեռը բարձրանում՝ երդվելով չիջնել այնտեղից մինչև Աստծո այցելությունը: Նրա օրինակով Աննան էլ տանն աղոթում և ապաշխարելու է նվիրվում: Եվ մի օր, երբ Աննան պարտեզում տեսնում է իրենց ձագերի հետ խաղացող թռչուններին, տխրում և լաց է լինում, քանզի ինքը զրկված էր մայրանալու շնորհից: Այդ պահին հայտնվում է Աստծո հրեշտակը և ավետում, որ զավակ է ունենալու, ում երանի են տալու բոլոր ազգերը: Նույն տեսիլքը երևում է նաև Հովակիմին, ով ուրախությունից սկսում է ողորմություն բաժանել աղքատներին: Աննան հղիանում է, և ծնված հրեշտականման մանկանն անվանում են Մարիամ, որ նշանակում է լուսավորյալ: Յուղաբեր կանայք Հիսուսի չարչարանքների, թաղման և խաչելության

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

ականատեսներն են: Նրանք Տիրոջ Հարության առաջին ավետաբերներն են:

Յուղաբեր կանայք Քրիստոսին հետևեցին Իր ողջ երկրային առաքելության իրագործման ընթացքում: Եկեղեցու կողմից նրանք կոչվում են «Յուղաբեր», որովհետև Միաշաբթի (Կիրակի) առավոտ գերեզման գնացին՝ Հիսուսի մարմինն իրենց պատրաստած անուշահոտ յուղերով օծելու: Իրենց անձնվիրության շնորհիվ նրանք առաջինը տեսան Հարուցյալ Փրկչին և այդ մասին հայտնեցին առաքյալներին: Նրանք նաև խմբովին ներկա էին Վերնատանը՝ Հոգեգալստին և առաքյալների հետ ստացան Սուրբ Հոգու շնորհները:

Commemoration of Sts. Joachim and Anna, Parents of the Holy Mother of God, and Oil-Bringing Women 25-08-2026

The names of St. Joachim (Jehoiakim) and Anna are closely related to Jesus, as they are the parents of the Holy Mother of God.

According to the tradition, wealthy Joachim was a descendant of King David, and Anna was the daughter of a priest. One day, when performing a service in the cathedral, the priest tells Joachim to stand in the end, as he had no son. Becoming upset, Joachim comes out of the Cathedral and immediately climbs up the mountains, vowing not to descend the mountain until the visit of God. Following his example, Anna, staying at home, devotes herself to prayer and repentance. And once, when Anna sees in the garden the birds playing with their nestlings, becomes sad and cries, as she wasn't granted the grace of being a mother. Just at that moment the Angel of God visits Anna, telling her that God will be granting her a son who will be the mother of the Savior of the world. Joachim also has the same vision and becoming very happy, gives alms to the poor. The parents decide to devote the baby to the Church. The baby is named Mary, which means "Illuminated".

The oil-bringing women are the witnesses of Christ's torments. They are the first to give the good tidings of the Resurrection of our Lord. The Oil-Bringing women followed Christ during all the time of realizing His earthly mission. The church calls them "Oil-Bringing Women" as on Sunday, in the morning, they hurried to the tomb to anoint the body of Jesus by the aromatic oils prepared by themselves.

Thanks to their devoutness they were first to see the Rosen God and told about it the Apostles. They were in the upstairs during Pentecost and together with the Apostles received the graces of the Holy Spirit.

The Armenian Apostolic Church commemorates the memory of St. Joachim and Anna together with the oil-Bringing Women.

ՏՕՆ ՍՈՒՐԲ ԽԱՉՎԵՐԱՑ — Կիրակի, Սեպտեմբեր 13, 2026

Անոնք որոնք կը փափաքին Ս Խաչվերացի տօնին առթիւ իրենց սրտագին նուիրատուութիւնները ընել, թող հաճին մոտենալ Ծուխի Հոգաբարցութեան կամ հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակը 020 7373 8133.

Ձեր ուխտը ընդունելի ըլլայ:

Exaltation of the Holy Cross — Sunday 13th September 2026

All those Parish and Armenian Community members wishing to make monetary donations, on the occasion of Exaltation of the Holy Cross, please contact the Parish Council members at church or call parish office **020 7373 8133 .**

Thanking you in advance,

St Yeghiche Armenian Church Parish Council

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Աստուածածնի վերափոխման երկրորդ կիրակիի Աւետարանի ընթերցման շուրջ խոկումն ու պատգամը:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Օրհնեալ ես դու կանանց մէջ, եւ օրհնեալ է քո որովայնի պտուղը: Որտեղի՞ց ինձ այս ուրախութիւնը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մօտ գայ» (Ղուկ 1:42-43)

Մայր Եկեղեցու սիրելի զաւակներ,

Մեր Փրկչի Մօր՝ Աստուածածին Սուրբ Կոյսի մասին խօսելիս մեկնիչները յաճախ են նոյնացնում Եկեղեցուն եւ Աստուածամօրը: Այս տրամաբանութեամբ է, որ Քրիստոսի Մայրը նաեւ բոլոր քրիստոնեաների Մայրն է, քանի որ Մայր Եկեղեցու աւազանից հոգով եւ ջրով ծնուածներ ենք բոլորս:

Սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնը եկեղեցական կեանքում ինն օր շարունակ է տօնախմբւում: Բոլոր քրիստոնեայ առաքելահիմն եկեղեցիներն ունեն այս տօնը: Մեր Եկեղեցում եւս պահուել է առաքեալներից փոխանցուած կարեւոր աւանդը, յիշողութիւնն ու մեծարանքը մաքրամաքուր Տիրամօր նկատմամբ, որին ***«օրհնեալ»*** են կոչում ե՛ւ հրեշտակը, ե՛ւ Եղիսաբէթը: Մենք էլ ամեն Առաւօտեան ժամերգութեան օրհներգութիւն ենք կատարում.

«ահա, այսուհետեւ բոլոր սերունդները ինձ երանի կը տան, որովհետեւ ամենազօր Աստուած մեծամեծ գործեր արեց ինձ համար, եւ նրա անունը սուրբ է» (Ղուկ 1:48-49)՝ կրկնելով այն, ինչ ինքը՝ Սուրբ Կոյսն ասաց Սուրբ Հոգով: Գաբրիէլ հրեշտակը նրան «***ով շնորհընկալ***» (գրաբարում «***բերկրեալդ***») է կանչում, որ այլ լեզուներում «***շնորհով լի***» կերպով է թարգմանուել:

Նորօրեայ աղանդաւորական խմբեր կան, որոնք մերժում են Կոյս Մարիամին Աստծոյ Մայր, Աստուածածին կամ Տիրամայր կոչել՝ յաճախ նրան ուղղակի «Յիսուսի մայր» կանչելով, աւելի յանդուգն հոգիները՝ «մեր քոյր» ասելով կամ անգամ ուղղակի նմանեցնելով հաւկիթի պատեանի, որ անպիտան է դառնում ճուտիկի ծնունդից յետոյ: Այնինչ Սուրբ Գրքում յստակ է մեծարանքի կոչը, որ ***բոլոր սերունդները*** «**Ահա, այսուհետեւ ինձ երանի կտան**»: Մենք միանում ենք Սուրբ Ծննդեան ժամանակից սկսուած եւ մինչեւ աշխարհի վերջը շարունակուող այս մեծարանքի տօնականութեանը: ՝ սուրբ Եղիսաբէթի հետ ***«Իմ Տիրոջ մայր»*** կանչելով Սուրբ Կոյս Մարիամին: Բոլոր կանանից տարբեր լինելը հրեշտակն է վկայում՝ Աւետմանը ասելով. ***«Օրհնեալ ես դու կանանց մէջ»*** եւ կարծես բացատրում է՝ ինչով. ***«Օրհնեալ է քո որովայնի պտուղը»*** (Ղուկ. 1:28):

Աստուածածին, Ամենասրբուհի, Սուրբ Մայր, Սուրբ Կոյս… բազմաթիւ են այն գեղեցիկ որակումները, որով Քրիստոսի հաւատացեալները, եկեղեցու վարդապետներն ու շարականագիր հայրերը անուանել են Փրկչի սուրբ Մօրը: Մեզ յուշող են Աւետարանում եղած կարեւոր վկայութիւնները՝ հրեշտակի դիմած «***բերկրեալ***» կամ «***շնորհընկալ***» կերպը, Սուրբ Հոգուց Եղիսաբէթի բերանով ասուած ***«իմ Տիրոջ մայրը»*** եւ ***«երանելի»*** դիմելաձեւը, որ մարգարէաբար հնչեց հենց Սուրբ Կոյսից՝ ***«բոլոր սերունդները ինձ երանի կտան»***:

Ըստ Եկեղեցու վարդապետութեան՝ Ծննդոց գրքում Աստծոյ տուած փրկութեան խոստման (Ծննդ. 3:15) կատարումը եղաւ Աստուածածնի միջոցով, քանի որ նրանից Ծնուածը ջախջախեց օձի՝ սատանայի գլուխը: Քրիստոսի մայրը լինելով՝ նրա մայրութիւնը կրում է նաեւ Քրիստոսին տրուող բոլոր անունները՝ կոչուելով ճշմարիտ Լոյսի (Յովհ. 1:9) Մայր, Փրկչի Մայր, Աստուածամայր, Էմմանուէլի (Մատթ. 1:23) եւ մարմնացեալ Աստծոյ (Յովհ. 1:14) Մայր:

Սուրբ Աստուածածնի Վերափոխման իննօրեայ տօնախմբումը կապուած է այն ընկալման հետ, որ երկինք փոխուող Տիրամայրը հրեշտակային ինը դասերի միջով է անցնում: Քրիստոսի Համբարձման տօնն էլ այս տրամաբանութեամբ է ինն օր շարունակ տօնւում: Համբարձման տասներորդ օրը Հօր Աջին բազմած Քրիստոս Հօրից ուղարկում է Սուրբ Հոգուն՝ Հոգեգալուստով Եկեղեցու առաջնորդութիւնը յանձնելով Սուրբ Հոգուն:

Սիրելինե՛ր, մենք ամէն օր սովորելիք դաս ունենք Սուրբ Գրքից. ուզո՞ւմ ենք, որ Աստուած բարձրացնի մեզ, խնամք տանի, պաշտպանի, պահապան եւ առաջնորդ լինի. սովորենք Սուրբ Կոյսի օրինակից: Նա Աստծոյ առաջ խոնարհութեան, Տիրոջ խօսքի նկատմամբ վստահութեան օրինակ է տալիս մեզ. ***«իմ հոգին ցնծաց իմ Փրկիչ Աստուծով, որովհետեւ նա իր հայեացքը դարձրեց իր աղախնի խոնարհութեան վրայ»***(Ղուկ. 1:48):

վերափոխուեց հրեշտակային բոլոր զօրութիւններից էլ վեր, քանի որ խոնարհուեց, յոյսեամբ պատրաստ եղաւ իր անձը մահուան վտանգի մատնել Տիրոջ խօսքի համար: Կամաւոր խոնարհուողն է Աստծոյ կողմից բարձրացուում, մեծարուում, փառաւորվում: Չէ՞ որ ***«Նրա ողորմութիւնը սերնդից սերունդ իր երկիւղածների վրայ: Նա իր բազուկով զօրութիւն ի գործ դրեց, ցրեց ամբարտաւաններին իրենց սրտի խորհուրդներով. հզօրներին տապալեց իրենց աթոռներից եւ բարձրացրեց խոնարհներին»*** (Ղուկ. 1:50-52):

Հաւատանք այս խօսքերին, որոնց գործադրման կենդանի օրինակ է Աստուածամայրը, իր անունը յիշելով աղօթենք Տիրոջը եւ խնդրենք, որ Մայր Եկեղեցու բոլոր զաւակներին պահպանի եւ առաջնորդի Իր Սուրբ Հոգով, Ում Հօր եւ Միածին Որդու հետ փառք յաւիտեանս. ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2026 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

24 August	Song of Songs 6:3-8; Malachi 3:1-2; Galatians 3:24-29; Luke 2:1-7
25 August	Sts. Joachim and Anna – parents of the Holy Mother of God – and the oil bearing women Wisdom 9:9-10:2; Esther 10:4-9; Judith 15:8-16:4; Ephesians 1:3-12; Matthew 1:17-21
26 August	1 Corinthians 15:58-16:11; Mark 4:10-20
27 August	Prophet Jeremiah Jeremiah 1:1-10; 38:1-13; 2 Peter 2:9-22; Matthew 2:16-18
28 August	1 Corinthians 16:12-24; Mark 4:26-34
29 August	Holy Apostles Thomas, James, and Simon Wisdom 9:13-10:3; Micah 7:18-20; 1 Corinthians 12:28-13:3; John 20:24-31



4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There are no Memorial Service Request for this Sunday

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal
Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk